Խորհրդակցում են մայրաքաղաքի ուսուցիչները

«Մանկավարժն անխոցելի պիտի լինի իր նկարագրով»

Անցած ուսումնական տարվա արդյունքները նոր՝ 2015-2016 ուս.տարում ուսման որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ մանկավարժական կոլեկտիվների անելիքներն ու խնդիրներն են քննարկվել երեկ Արցախի մայրաքաղաքի՝ ուսուցիչների և ոլորտի պատասխանատուների մասնակցությամբ՝ օգոստոսյան խորհրդակցությունում, որին ներկա էին ԿԳՍ նախարար Սլավա Ասրյանը, երկրի ու քաղաքային իշխանությունների այլ ներկայացուցիչներ:

Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պետ Կառլեն Մարգարյանի հավաստմամբ, ով խորհրդակցությունում հանդես է եկել զեկույցով մայրաքաղաքի տարածքում գործում են հանրակրթություն իրականացնող 9 հիմնական, 1 միջնակարգ, 2 ավագ, 1 հատուկ/ֆիզմաթ/, 1 ռազմամարզական վարժարան, 1 մասնագիտական /պարարվեստի քոլեջ/ հաստատություններ՝ 296 լրակազմ դասարանով (նախկին ուսումնականի 321-ի փոխարեն), 6891 աշակերտի ընդգրկմամբ (նախկին 7158-ի փոխարեն), չորս նախադպրոցական հիմնարկ՝ մանկապարտեզ՝ 26 խմբով և 1085 երեխայի ընդգրկմամբ, մեկ մանկական ստեղծագործական կենտրոն /100 խմբով և 1225 երեխայի ընդգրկմամբ/, 1 մարզադպրոց՝ 45 խմբով և 595 երեխայի ընդգրկմամբ:

Մանկապարտեզներում ընդգրկված խմբերի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու, ինչպես նաև նախադպրոցական հիմնարկներում առավել շատ երեխաներ ընդգրկելու նպատակով դպրոցները համալրվել են հինգ տարեկանների լրացուցիչ խմբերով, որի արդյունքում դպրոցներում 2014-2015 ուս.տարում գործել են նախադպրոցական խմբեր, որից 8-ը՝ 253 երեխայի ընդգրկմամբ, 9-ժամյա մանկապարտեզային ռեժիմով և 24 խումբ՝ 699 երեխայի ընդգրկմամբ, 6 -ժամյա ռեժիմով:Հետազոտվել է հանրակրթական դպրոցների կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 113 երեխա, որոնցից 19 աշակերտի հետ ուսուցումը կազմակերպվում է անհատական ծրագրով՝ տնային պայմաններում, 94 աշակերտներ ներառված են մասսայական դասարաններում:

Ուսումնական տարվա վերջին սովորողների քանակը ուսումնական հաստատությունների 1-12-րդ դասարաններում կազմել է 7294 աշակերտ: Ընդհանուր առմամբ, ուսումնական տարին գերազանց գնահատականներով ավարտել և հաջորդ դասարաններ են փոխադրվել 633 աշակերտներ՝ ստանալով գերազանցության գովասանագրեր: Ավարտական 9-րդ դասարանների 319 աշակերտից քննությունների

առաջին փուլի արդյունքներով 288-ին տրվել է 9-ամյա (հիմնական) կրթության վկայական:

Հանդիպմանը Կ.Մարգարյանն անդրադարձել է կրթական համակարգում ընթացող բարեփոխումներին, հավաստի փաստերով արձանագրել այն ձեռքբերումներն ու թերացումները, որ ԳԹԿ-ի կողմից ստուգումների արդյունքում, ի հայտ են բերել մասնագետները: Բանախոսը դրական գնահատելով անցած ուսումնականում դպրոցական մայրաքաղաքի դպրոցականների առարկայական օլիմպիադայի արդյունքները, նշեց երևույթի նկատմամբ տարեցտարի աճող պետական հոգածությունը: ՀՀ եզրափակիչ փուլում հաղթած և դիպլոմների ու գովասանագրերի արժանացած դպրոցականները ԼՂՀ Նախագահի կողմից ևս գնահատանքի և պարգևների են արժանացել: Մայրաքաղաքի դպրոցականներն ակնառու հաջողություններ են ձեռք բերել նաև «Ռուսական արջուկ», «Կենգուրու» և «Մեղու» միջազգային մրցույթներում:

Հաշվետու ժամանակաշրջանում առարկայական խոր պատրաստվածություն ունեցող և ստեղծագործական աշխատանք կատարող ուսուցիչներին բացահայտելու, նրանց մանկավարժական և մասնագիտական առաջավոր փորձը տարածելու, հասարակության մեջ ուսուցիչ-անհատի հեղինակության բարձրացման նպատակով անց է կացվել «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ» «Տարվա լավագույն դաստիարակ», «Տարվա լավագույն զինղեկ» ավանդական մրցույթը և հաղթողները խրախուսվել են ԿԳՍ-ի կողմից: Բաժնի կողմից առանձնակի ուշադրություն է դարձվել նախադպրոցական հիմնարկների ուսումնանյութական բազայի բարելավմանը, երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացի, նրանց ազատ ժամանցի ու հանգստի կազմակերպմանը: Նոր ուսումնականը լիարժեք կազմակերպելու նպատակով ընթացիկ վերանորոգման աշխատանքներ են կազմակերպվել քաղաքի բոլոր դպրոցներում: Հրատապ է մնում հ. 10 հիմնական դպրոցի շենքի հիմնարար վերանորոգման հարցը: Համալրվել է դպրոցների ուսումնանյութական բազան, ձեռք են բերվել դպրոցական անհրաժեշտ կահույք, հակահրդեհային միջոցներ, տեխնիկական և մարզական պարագաներ, տարածքներում կառուցվել են տաղավարներ և այլն: Ստացվել ու ուսումնական հաստատություններ են առաքվել ՀՀ-ից ստացված մեթոդական գրականությունն ու ուսումնաօժանդակ նյութերը:

Քաղաքապետարանի կրթության և գիտության բաժնի պետն ուրախությամբ արձանագրեց, որ «այսօրվա դրությամբ, առաջին դասարան կընդունվեն 1011 երեխաներ», մի ցուցանիշ, որը 1994-95 ուս տարուց առ այսօր չի գրանցվել…

Ամփոփելով խոսքը, պարոն Մարգարյանը մասնավերապես նշեց. «Այսօր, քան երբևէ, հրատապ պահանջ է, որ դպրոցի շեմին ոտք դնող ամեն մի մանկավարժ իր սաներին հմայի անձնական օրինակով: Դա առաջին հերթին նշանակում է, որ մանկավարժը անխոցելի պետք է լինի իր բարոյական նկարագրով, վարվեցողության կուլտուրայով, մանկավարժական տակտով, գաղափարական համոզվածությամբ, - ասաց Կ.Մարգարյանը: - Իսկ ցանկալի արդյունքի հասնելու համար պետք է բոլորանվեր սիրահարված ու նվիրված լինենք մեր գործին, սերտ կապ ստեղծելով դաստիարակության օբյեկտի՝ աշակերտի հետ, սովորեցնենք և ջանասիրությամբ առաջնորդվենք դեպի գեղեցկի աշխարհը»…

Հանդես գալով խորհրդակցությունում, կրթության, գիտության և սպորտի նախարար Սլավա Ասրյանը հուսադրող համարեց մայրաքաղաքի կրթօջախներում՝ ընթացքող համակարգային բարեփոխումների այն միտումը, որը նպատակաուղղված է սովորողների ուսման մակարդակի բարձրացմանը և նրանց հայեցի դաստիարակմանը, մանկավարժական կոլեկտիվներին առաջադրվող պահանջների իրագործմանը, առաջավոր փորձի արմատավորմանը: Նախարարն իր խոսքում անդրադարձել է նաև համակարգի առջև ծառացած հիմնախնդիրներին, պատասխանել խորհրդակցության մասնակիցների հարցերին:

Հանրակրթական դպրոցներում անցկացված տեսչական ստուգումների. պետական, ավարտական քննությունների արդյունքները խորհրդակցության մասնակիցներին են ներկայացրել փոխնախարար Միքայել Համբարձումյանը, նախարարության տեսչության պետ Սոս Սարգսյանը և ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանը:

Ստեփանակերտի քաղաքապետարանի մամուլի ծառայություն